ԽՈՐՏԱԿՈՒՄԻՑ ԴԵՊԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Մենք բոլորս սերում ենք մի խորտակված ընտանիքից՝ Ադամից ու Եվայից, բայց Աստված ուզում է, որ մենք խորտակված վիճակից անցնենք օրհնված վիճակի:

1. ՏՈՒՐ ԻՆՁ:
2. ՕԳՏԱԳՈՐԾԻՐ ԻՆՁ:
3. ՔՆՆԻՐ ԻՆՁ ԵՎ ԴԱՐՁՐՈՒ ԻՆՁ:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՂՈՒԿԱՍ 15.12-29

Ղուկ. 15:11-32 - 11 Եւ ասաց. Մի մարդ երկու որդի ունէր. 12 Եւ նորանցից փոքրն ասեց հօրը. Հայր, ՏՈՒՐ ԻՆՁ ինչ որ բաժին կ'հասնէ ինձ ստացուածքիցդ, և նա ունեցվածքը բաժանեց նրանց: 13 Եւ շատ օր չ'անցած՝ փոքր որդին ամեն բաները ժողովեց հեռու երկիր գնաց. եւ այնտեղ վատնեց իր ունեցուածքը, որովհետեւ անառակ կեանքով էր ապրում:

14 Եւ երբ ամէն ինչ սպառեց, այդ երկրում սաստիկ սով եղաւ, եւ նա սկսեց չքաւոր դառնալ: 15 Գնաց դիմեց այդ երկրի քաղաքացիներից մէկին, եւ սա ուղարկեց նրան իր ագարակը՝ խոզեր արածեցնելու: 16 Եւ նա ցանկանում էր իր որովայնը լցնել եղջերենու պտղով, որ խոզերն էին ուտում, բայց ոչ ոք այդ նրան չէր տալիս: 17 Ապա խելքի եկաւ եւ ասաց. ,Քանի՜ վարձու աշխատաւորներ կան իմ հօր տանը, որ առատ հաց ունեն, եւ ես այստեղ սովամահ կորչում եմ: 18 Վեր կենամ գնամ իմ հօր մօտ եւ նրան ասեմ. հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ ու քո առաջ : 19 Եւ այլեւս արժանի չեմ քո որդին կոչուելու, ինձ վերցրո՛ւ իբրեւ քո աշխատաւորներից մէկը: 20 Եւ վեր կացաւ եկաւ իր հօր մօտ. եւ մինչ դեռ հեռու էր, հայրը տեսաւ նրան եւ գթաց. վեր կացաւ եւ վազեց նրան ընդառաջ, ընկաւ նրա պարանոցով եւ համբուրեց նրան: 21 Եւ որդին ասեց նորան. Հայր, մեղանչեցի երկնքի դէմ եւ քո առաջ, եւ այլ արժանի չեմ քո որդին կոչուելու: 22 Հայրն էլ ասեց իր ծառաներին. Առաջի պատմուճանը հանեցէք եւ հագցրէք նորան, եւ մատանի դրէք նորա ձեռքին, եւ կօշիկներ նորա ոտներին: 23 Եւ բերէ՛ք պարարտ եզը, մորթեցէ՛ք, ուտենք եւ ուրախ լինենք, 24 Որ իմ այս որդին մեռած էր եւ կենդանացաւ, կորած էր եւ գտնուեց. եւ սկսեցին ուրախանալ: 25 Եւ նորա մեծ որդին յանդումն էր. եւ երբոր եկաւ տանը մօտեցաւ, երգերի եւ պար գալու ձայնը լսեց: 26 Եւ ծառաներից մէկին կանչեց իր մօտ, հարցնում էր թէ այդ ի՞նչ է: 27 Նա էլ ասեց նորան. թէ Եղբայրդ եկել է, եւ քո հայրը մսացու եզը մորթեց, որովհետեւ ողջ եւ առողջ ընդունեց նորան: 28 Եւ նա բարկացաւ, եւ չէր ուզում ներս մտնել, բայց հայրը դուրս եկաւ, աղաչում էր նորան: 29 Նա էլ պատասխանեց եւ ասեց հօրը. Ահա այսքան տարի է, որ քեզ ծառայում եմ, եւ քո պատվէրից երբէք դուրս չեմ եկել. բայց ինձ երբէք մի ուլ չ'տվիր, որ իմ բարեկամների հետ ուրախ լինէի: 30 Իսկ երբոր այդ քո որդին եկաւ, որ քո ստացուածքը պոռնիկների հետ կերաւ, մսացու եզը մորթեցիր դրա համար: 31 Նա էլ ասեց նորան. Որդեակ, դու ամեն ժամանակ ինձ հետ ես, եւ ամեն ինչ որ իմս է՝ քոնն է: 32 Բայց ուրախ լինել եւ խնդալ պէտք էր. որ այս քո եղբայրը մեռած էր եւ կենդանացաւ. կորած էր եւ գտնուեցաւ:

I. ՏՈՒՐ ԻՆՁ:

*Մենք բոլորս սկսում ենք ոչ հասուն՝ **Տուր ինձ** փուլից:*

*Որպես երեխաներ, մենք մեր կյանքն սկսում ենք **Տուր ինձ** փուլով՝ եսասիրությամբ: Ղուկաս 15.12-ում, կրտսեր որդին ասաց. «Հա՛յր, տո՛ւր ինձ իմ հասանելիք բաժինը»:*

Նույնիսկ ամուսնություններն են սկսվում այս ձևով: Մենք ունենք ՏՈՒՐ ԻՆՁ մտածելակերպ: Մենք անցնում ենք կյանքի փուլերով, սակայն Աստված ուզում է, որ մենք աճենք և դուրս գանք Տուր ինձ փուլից:

Մատ. *26:14-15* - *14* Այն ժամանակ տասնեւերկուսից մէկը, որ Հուդա Իսկարիովտացի էր ասվում, գնաց քահանայապետների մօտ եւ ասեց. *15* Ի՞նչ էք կամենում ինձ տալ, եւ ես ձեզ մատնեմ նորան: Եւ նորանք երեսուն արծաթ կշռեցին տվին նորան:

II. ՕԳՏԱԳՈՐԾԻՐ ԻՆՁ:

*Աճելով, մենք անցնում ենք **Օգտագործիր ինձ** փուլ:*

Ղուկ. *15:13* - *13* Եւ շատ օր չ'անցած՝ փոքր որդին ամեն բաները ժողովեց հեռու երկիր գնաց. եւ այնտեղ իր ստացվածքը վատնեց, անառակ ապրելով:

Գործ. *8:19* - *19* Ինձ էլ տվէք այս իշխանութիւնն, որ ում վերա ձեռք դնեմ՝ Սուրբ Հոգին առնէ:

- *Մենք ասում ենք «Օգտագործիր ինձ», որովհետև փառասեր ենք և ոչ հասուն, ոչ թե այն պատճառով, որ ուզում ենք ինչ-որ բան անել Աստծո համար, այլ ուզում ենք կարևոր և նշանակալի լինել: Մենք սկսում ենք՝ ասելով. «Ես ուզում եմ, որ Դու **ինձ մի բան տաս**, որ կերջանկացնի ինձ», իսկ հետո մտածում ենք. «Ես ուզում եմ **մի բան անել**, որ կերջանկացնի ինձ», որ եսակետրոն ծառայություն է: Եսասիրությունը կործանում է ընտանիքները:*

Փիլիպ. *2:3* - *3* Ոչ մի բան չլինի գրգռումով, եւ ոչ էլ սնապարծութիւնով. այլ խոնարհությունով թող մէկը միյուսին իր անձիցն ավելի լավ համարէ:

III. ՔՆՆԻՐ ԻՆՁ ԵՎ ԴԱՐՁՐՈՒ ԻՆՁ:

Ղուկ. *15:17* - *17* Եւ ինքն իրեն գալով ասեց. Քանի՛ վարձկաններ ունի իմ հայրը՝ հացով լցված. եւ ես այստեղ սովամահ կորչում եմ:

Ղուկ. *15:19* - *19* Եւ այլեւս արժանի չեմ քո որդի կոչուելու. ինձ քո վարձկանների մէկի պէս դարձրու:

Սաղ. *139:23-24* - *23* Փորձիր ինձ, ով Աստուած, եւ ճանաչիր իմ սիրտը. քննիր ինձ եւ ճանաչիր իմ մտածմունքները. *24* Եւ տես, թէ որ չար ճանապարհում լինեմ, եւ առաջնորդիր ինձ դէպի յաւիտենական ճանապարհը:

Հասունանալով, մենք քննում ենք մեր սիրտն ու խնդրում Աստծուն, որ Քննի մեզ: Մենք դադարում ենք մեղքն ուրիշների վրա գցել և վերահսկել մյուսներին: Մենք հարցնում ենք. «Ի՞նչ է Աստված ուզում փոխել իմ մեջ»: Հպարտությունը մի բան է, որ մեզ հետ է պահում հասունության փուլից: Հպարտությունը փորձում է մեզ դարձնել Աստծո համար անհասանելի և անուսուցանելի: Հասունության հետ մենք սովորում ենք, որ մենք ենք միայն պատասխանատու մեր սեփական արարքների ու արձագանքների համար:

Ղուկ. *15:29,31* *29* Նա էլ պատասխանեց եւ ասեց հօրը. Ահա այսքան տարի է, որ քեզ ծառայում եմ, եւ քո պատուէրից երբէք դուրս չեմ եկել. բայց ինձ երբէք մի ուլ չ'տվիր, որ իմ բարեկամների հետ ուրախ լինէի:

***31* Նա էլ ասեց նորան. Որդեակ, դու ամեն ժամանակ ինձ հետ ես, եւ ամեն ինչ որ իմս է՝ քոնն է:**

Հասուն հավատացյալն Աստծուն թույլ է տալիս, որ իրեն դարձնի այնպիսին, ինչպիսին Նա է ուզում: Մենք սկսում ենք ասելով. «Դարձրու ինձ մի անոթ, որ պիտանի լինեմ իմ Տիրոջ համար»: Աստված ուզում է, որ խորտակվածությունից գնանք օրհնության, սակայն օրհնությունը գալիս է, երբ եսասիրությունից անցնում ենք առատաձեռնության: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ մենք անցնում ենք այն բանից, թե ինչ կարող է Աստված անել մեզ համար, այն բանին, թե ինչ կարող ենք մենք անել մյուսների համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Աստված ուզում է օրհնել ընտանիքներն ու տեսնել, որ նրանք քայլում են ազատության և առողջ փոխհարաբերությունների մեջ՝ Իր հովանու ներքո: